

tica) Գ. Հատորը, որ կը խօսի ժամանակակից շրջանին վրայ:

* * *

Սոյն երկու հեղինակներուն փաստացի պատասխան մը տուած է Նաչի Հայ դպրոցին հին ուսուցիչներէն մէկը, Լուքա (Լուսիկ) Սրմաքաչ, իր «Պատասխան անարգական գրութեանց ժօրթ Արամայի եւ Էքօնօմու Շթէֆան Բըլինէսքու ընդդէմ Հայ եկեղեցւոյ» գրութեան — *Respuns la scrierile calomnioase ala D-lui George Arama si Econ. Stefan Calinescu contra Bisericei Armene, Yasi, 1891*):

Բայց ինչ որ աւելի կսկծալի կը դարձնէ պարապան, այն է թէ քաղաքակրթութեան այս դարուն դեռ մոլեռանդութիւնը կ'իշխէ մարդոց հոգիներուն մէջ. առիթը ունեցած եմ ես ինքս հաստատելու որ ուումէն ուամիկ ժողովուրդին մէջ դեռ հաւատացողներ կան Հայոց

մասին հիւսուած առասպելներուն:

Աւելին. նոյնիսկ զարգացած մարդիկ կը չահագործեն այդ առասպելները:

Դեռ անցեալ տարի Աւսթրա թերթը, որ օտկանն է Տոքթ. Լուսիուի, — այժմ աշխատանքի նախարար, — քաղաքական հակառակորդի մը՝ Վիրձիլ Մաճառուի վրայ յարձակած աւտեն, հայկական ծագում վերագրելով անոր, կ'ըսէր թէ ան կը պաշտէ Արձիպուր չունը, եւ աղտեղութիւն կը խառնէ իր կերակուրներուն մէջ:

Նոյնիսկ երեսփ. ժողովին բեմէն, Վիրձիլ Մաճառուի կրակոտ մէկ ճառը ընդմիջելով, կառավարական երեսփոխան մը պոռաց.

— Գնա Արձիպուրը պաշտէ:

Ու բողոքող մը չեղաւ: Նոյնիսկ այդ բացազանչութիւնը հաճոյքով արտատպեցին Մաճառուի հակառակորդ թերթերը...

Ո՞վ է զառանցեր թէ քաղաքակրթութեան դարն է մեր այս ապրածը...

